

ՄԱՏԱՊԱՐԿԱՆԻ

ՕՐԱԳԻՐ

ՅԱՆՎԱՐԱՐ ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

ՈՒԹԵՐՈՐԴ՝ ՏԱՐԻ

ԶՄԻՒՆԵՒԱ ՈՒՐԵԱԹ 19 ՄԱՐՏԻ 1848

ԹԻՒ 307

ՆԱԽԲԵՆ ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

Կոստանդնուպոլիս, 16 մարտի :

(Օսմանեան կառավարութիւնը գտնիք յարա-
տեւութեամբ մը կը շարունակէ միշտ ի գործ դը-
նելու ամէն կերպ նոր բարեկարգութիւնները ,
զորոնք օգտակար կը համարուի տէրութեան յառա-
կող իմութեանը և իւր հպատակաց բարօրութեա-
նը համար . ուստի բոլոր ազգերը երախտագէտ
սրտիւ և ջերմեւանդութեամբ աղօթող են ան-
դադար օգոստոսիաւ առատագութ Սուլթանին
երկար կենացը համար . որուն հայրական բարձր
պաշտպանութեամբ և մեծագոր իշխանութեամբ
բը կատարեալ հանգստութիւն կը տիրէ տէրու-
թեան ամէն նահանգաց մէջ :

— Արքունի հրովարտակաւ հետեւեալ փոփո-
խութիւնները ի գործ դրուեցան :

Հաճի Քեամիլի փաշան , որ երբեմն Պանիայի
կուսակալէր , Բամասիոսի կառավարիչ անուանե-
ցաւ : Մուսա Սաֆեթի փաշային տեղը , որ մօտ
օրերս Կոստանդնուպոլիս պիտի դառնայ :

Կարնոյ վաղեմի կուսակալ հաճի Իզիթ փաշան
Կանեայի կառավարիչ անուանեցաւ , փոխանակ
Հաֆիզ փաշային . որուն Իսքիսպի կուսակա-
լութիւնը յանձնուեցաւ :

— Արժանայարգ միսթր Նալբանդեմը՝ մայրաքա-
ղաքի Նիզիյի դեսպանատան առաջին խորհրդոյ
բարեօրոգար անուանեցաւ , և մօտ օրերս պիտի
գայ Լոնտայէն :

— Մնայ 12 ին ամէն իտալացիները սգոյ հա-
գուստով սուրբ Պետրոսի լատինացեաց եկեղեցին
ժողովուեցան ուրտեղ հանգիստաւոր պատարագ մը
տուեցաւ վասն հանգստեան հոգեւոյ Իտալիայի ա-
ղաւթութեանը համար մեռնողներուն : Բոլոր ի-
տալացի հրեաները ընկերութեամբ իրենց լծակ
ցացը և սեւեր հագած ներկայ գտնուեցան այս
բարեպաշտական սգալի հանդիսին :

Աւրախ սրտիւ կը տեսնեմք թէ որչափ որ փոքը-

մի կրօնական խոտութիւնները և նախապաշար
մունքը կը տարանան՝ կը վերանան , նոյն չափ ալ
քրիստոնէական եղբայրութեանը կը զօրանայ
կրօնարձակութիւն , ոչ միայն քրիստոնէաց ազգաց և
համազդի ժողովուրդաց մէջ , այլև քրիստոնէական
կրօնի հակառակ ժողովուրդաց հետ անգամ : Արեւ-
մին թող թոյլ տրուի մեզ կրկնել հաղորդիս , Կեյ-
ջէ՝ Պիոս Իննէրդը , որ իւր լուսաւորեալ մտքը և
խմտութեամբ շատ ազնի իմացաւ իւր քահա-
նայապետական բարձր պաշտօնին պարտաւորու-
թիւնը , որ խոնարհամիտ եղբայրութեան է .
որուն բարեկեան արդիւնքը արդէն սկսան վայե-
լելու տարբեր կրօնի ամէն ժողովուրդները : Սա-
կայն ցաւալի է մեզ կարգաւայնպիսի լրագիրներ ,
որոնք կը գատապարտեն Կեյջէ՝ Պիոս Իննէրդը ազա-
ղակները . բայց , տէր իմ՝ Կոստանդնուպոլիս , չեմք գի-
տեր թէ ինչ մեղք կրնայ ծագիլ արդեօք այսպի-
սի անմեղ և արժանաւոր բարեմաղթութեան մը :

— Նիզիյի առժամանակեայ դեսպան Լորտ
Քալլին մարտի 2 ին՝ մնաք բարեաւ ըսելու համար
փառաւոր հացիկերով մը ըրաւ , ուրտեղ ներկայ
էին անգղիացի երեւելի փառաւորականները , Լոնտ-
այի գլխաւոր լրագրաց թղթակիցները , և դեռ
պանատան պաշտօնակալները : Լորտ Քալլին յիշ-
եալ տոյց 9 ին թաթարիս՝ ըստած անգղիական
շողեւնաւով ճամբայ ելաւ Լոնտրա երթալու :

— Մաղձայոյցի դորտ թիւնը օր ըստ օրէ տկա-
րանալու վրայ է մայրաքաղաքիս մէջ . թէպէտեւ եր-
բեմն երբեմն առանձին դիպուածներ պակաս չեն

ԵԳԻՊՏՈՍ . Ալեքսանդրիա , 4 մարտի , Նշանակու-
թեան արժանի բաղադրական լուրեր չունիմք . հան-
գստութիւնը կը շարունակուի միշտ ամէն տեղ , և
Նորին Բարձրութեան Կիլիկիոյ չըլլալ գրեթէ
ամենեւին յայտնի չէ . բանդի Վապաս փաշան գը-
վիլի փութով և անխնայ ջանքի ի գործ կը դնէ
իւր բարձր պաշտօնը :

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

Յարգոյ հրատարակիչ :

Կոստանդնուպոլիս , 2 մարտի 1848 :

Բարեհաճաւ լրագրոյդ միջոցաւ մեր սիրելի
ազգին ամէն կերպ օգտակար տեղեկութիւններ
տալու պատգամով ըլլալիս՝ այս խոնարհ գրու-
թեան հրատարակութեան արտահայտութեամբ
հաստատած պիտի լըլայի , թէ որ արդէն մեզնէ
առաջ բանիւ և արդեամբ շատ վկայութիւն եղած
չըլլային : Աւստի ամէնուն յայտնի եղած այս ճիշ-
մարտութեանը վրայօք զանց առնելով , միայն ձեր
բարեմիտ նպատակին նիւթ մըն ալ կաւեցնեմ
առաջինից գրութեամբս , ապահով ըլլալով՝ որ
իբր ազգասիրական անհրաժեշտ պարտաւորու-
թիւն սիրով յանձնառու կըլլաք ձեր ազգագետ
լրագրին էջերուն մէջ զետեղելու հետագայ տե-
ղեկութիւնները . զորոնք ոչ միայն ազգերնուս
պատիւ մը ըլլալու մտք կը գրեմ , այլև իբր
յորդոր և նախանձաւորութեան օրինակ երեւելի
հայ գերդատաններուն բարեբողջ շառաւիղաց

(1) Զերկրայի սրտիւ կը հրատարակեմք առաջինից գրութիւնը
աներկայ ըլլալով թէ բոլոր հրատարակութիւնը մեծ հաճութեամբ
պիտի կարգայ զայն . ըստ որում ազգային վեհապետութեան
մը որդւոյն բնական ստորագրեցող և արտապատիւն կը պատմէ
Կեյջէ՝ Պիոսին : ՏԱՏԵԱՆ փեմաշուք գերդատանը , որ մեր
ամենատիրելի ազգին փառքը և պատիւը կաւեցնէ ամէն բարե-
պատեհ առիթներու մէջ :

Բարձրապատիւ Փոխարքայն Մաղթայէն ելելով
Նորոյի գացեր է . ուրտեղ կը գտնուի նաև իւր
որդին բարձրապատիւ Կարահիմ փաշան . որուն
առաջնութիւնը խիստ բարեօք վեճակի մէջ է ե-
ղեր : Իսկ Մէհմեմէտ Բի փաշային հիւանդու-
թիւնը գրեթէ միևնոյնն է . այսու ամենայնիւ
կը յուսացուի թէ Լուսաւոր օգը մեծ օգնութիւն
պիտի ընէ Նորին Բարձրութեան , իւր բնական
ուժը քիչ ժամանակին ստանալու համար :

ԱՐՏԱԼԻԱ ԵՎ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼ

ԱՆԴՆԱ . Լոնտրա , 28 փետրարի , Կաղղոյ լուրերը
մեծ ազդեցութիւն ըրին Լոնտրայի մէջ . գրեթէ
ամէն լրագիրները համակրական սէր և բարեկա-
մութիւն կը ցըցունեն գաղղիացի ժողովուրդին .
որոնց յաղթութիւնը և հասարակապետութեան
հաստատութիւնը օճանալու համար քանի մը
երեւելի ժողովներ ըրին , ուրտեղ ազգու առեւնա-
բանութիւններ եղան սոսկմանագրական աղատու-
թեանց վրայօք . Լոնտրայի ժողովականներէն մեծագոյն
մտքը գործաւոր էին : Կըստովի մէջ (Կալիֆա)
ևս մեծ ժողով մը եղաւ , նմանապէս գաղղիացեաց
պատամբութեան յաջողութեանը վրայ խնդա-
կից ըլլալու համար : Յիշեալ քաղաքին մէջ
փետրարի 22-23 և 24 ին ծանր խռովութիւններ
պատահեցան , բաղնիքի գործաւորները մէկտեղ
գումարուելով՝ զէնք առին . և զինավաճառաց
խանութներէն զէնք յօփշտակելով բոլոր թա-
ղերը պտղտեցան պոռաւով , Հայ Կամ ապագամբոսիս
Հացափորձաց և արմաթք ծախողներուն քանի մը
խանութները կոտորեցին և մէջը եղածները կը
ղորտեցին . այսու ամենայնիւ Լոնտրայի շու-
տով զօրք հասնելով , բարեկարգութիւնը անմի-
ջապէս հաստատուեցաւ . տակայն իսկըլան ժող-
վուրդը գէմ կենալ ուղեւով պահապան զօրաց ,
զօրապետը հրաման տուաւ հրացանները պարպե-

Կոյսեր բարի կամեցողութիւնը և ուսումնասիրա-
կան ջանքը , նմանապէս իւր շնախարհիկ պաշտ-
պանութիւնը հովանի չըլլային ամէն կերպ բարե-
կարգութեանց և օգտակար գործաւորութեանց
վրայ : Եւ անոնց պարտական բարձր պաշտպանու-
թեան մը շնորհիւն է , որ արքունի փառօգապետ
և արքունի գործատանց տեսուչ փեմապիայ Տա-
տեան քրիստոսազօր Յօհաննէս ամիրային հանձա-
րամիտ որդին Ներսէս Խոսրով աղան , իւր բնա-
կան ճարտարութեամբ և մեքենական արհեստ-
տից տեղեկութեամբ , առաջինն եղաւ որ երկա-
թէ ճանապարհ մը շինեց Տաճկաստանի մէջ : Լոն-
տրայէն ճանապարհը Լուսաւորի երկաթէ ճանա-
պարհներէն ամենեւին տարբերութիւն մը չունի ,
և նոյն սկզբանց վրայ հիմնեալ է : Բայց այս տեղս
դիտողութեան արժանի բան մը կայ , որ մեծ պա-
տիւ կընէ յիշեալ մեր ճարտարամիտ պայադատին .
քանզի Լուսաւորի մէջ ասանկ ճանապարհ մը շին-
ուելու առեւն՝ ոմանք գործընկերներ , և այլ հարկա-
ւոր եղած բաները կը պատրաստեն . ուրիշ արհես-
տագէտք ալ , այսինքն երկրաշափք և երկրաբանք
երկրին դիքը կը զննեն , ճամբան կը չափեն , զանա-
զան ձևեր կը գծագրեն և այլն : Եւ ընդհակա-
ռակն այս քաջաշին Լոնտրայի ինքը միևնոյն պարապե-
ցաւ այս գործին վրայ , գիրքին բարձրութիւնը և
խորութիւնը , և տեղերուն մէկզմէկէ՝ հեռաւոր

լու բազմութեանը վրայ, ուստի մէկ երիտասարդ խիղճն նոյն տեղը մեռաւ, և հինգ հոգի վերաւորուեցան . որոնցմէ երկուքին վերքը մահաբեր է :

— Թայե՛ղ լրագիրը կը հաստատէ թէ Բրուսիայ թագաւորին գեսպանը օրինաւոր կերպիւ իմաց տուեր է Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը, թէ Բրուսիան ամենեւին միջամուխ ըլլալու չէ Գաղղիոյ ներքին գործոցը : Բրուսիայ տէրութեան այս յայտարարութիւնը խիստ հաճելի եղաւ Մեզ զի կառավարութեանը, որ արդէն միևնոյն քաղաքական սկզբունքը հրատարակած էր ազգային պատգամաւորաց ժողովոյն մէջ :

— Մարիի Բրուսիայ լրագիրը կը անուշանայ վերաւ վարի 23 (մարտի 6) թուով, թէ գաղղիացւոց թագաւորը և թագուհին ընկերութեամբ իրենց մեծ որդւոյն Նըմուրի դքսին Բլէրմոնթ գիւղաքաղաքը հասեր են, որ Պէլճիգայի թագաւորին ստացուածքն է : Նոյն օրը Մեզ զի կառավարութեանը բարձրագատիւ Մարիթ իշխանը ընկերութեամբ Պուլթրի գնդապետին Բլէրմոնթ այցելութեան գացեր է Լուի Պիլիի թագաւորին և թագուհիին, որոնց հետ երկար ժամանակ խօսակցութիւն ընելէն ետքը՝ յիշեալ բարձրագատիւ իշխանը վերադարձ Լոնտոն գարձեր է :

ԳԱՂՂԱՒԱՆ. Փարիզ, 29 փետրւարի (12 մարտի) : Փարիզի ապստամբութիւնը, որուն վրայօք համառօտ տեսեցողութիւն մը տուինք մեր նախընթաց թերթովը քթանելէ հետեւութիւն մը ունեցաւ ՚ի մասին հասարակաց բարեկարգութեան և ապահովութեան : Երբեք ապստամբութիւն մը սոսիսի արագութեամբ բարեկարգութեան մը չունեցաւ : Եւ յայտարարութեան վեհանաժողովուրդը, իւր բարոյական ուժովը բանի մը ժամու մէջ տէր ըլլալով ահագին մայրաքաղաքի մը, ուրտեղ 100 հազարէն աւելի թագաւորական զօրք կային, անմիջապէս իմացաւ որ բարոյականութիւնը, և իւր յաղթութեան պահպանութիւնը հասարակաց ապահովութեան հաստատուն մնայէն կախեալ են : Բնութի ինքը անձամբ նախորդ կառավարութեան դատատանը ընելէն ետքը, յօժարամտութեամբ կը հնազանդէր ընկերական բարեկարգութեան օրինացը, և քաղաքական ոստիկանութեան (բօլիս) պաշտօնը ինքը ՚ի գործ կը դնէր, պատժելով անմիջապէս հազուագիւտ չարագործութիւնները, որոնք կը սպառնային պղծել իւր պանծալի յաղթութիւնը : Երբ այսպիսի լուսաւորեալ բարեփոխութիւնը ժողովուրդը իրաւամբ արժանի է այն ամէն

ազատութեանցը, զորոնք զարմանալի դիւցազնութեամբ մը, և իւր արեան գնովը ստացաւ :

Գաղղիոյ Հասարակապետութիւնը, որ հիմնադրուեցաւ առժամանակեայ կառավարութեան մը յանձնաժողովէ, նորէն բարեկարգութիւններ կը հաստատէ ամէն օր : Եւ ազգին բարեկարգութեանը և հանգստութեանը հոգ կը տանի անխնայ ջանք և գովելի փութով : Երբեք հասարակաց օգտակար երևելի նոր աշխատութիւններ անօրինեց, որպէսզի բաղմամբ զօրծաւորները պարապ չմնան, և օրինաւոր կերպիւ կարող ըլլան իրենց ապրուստը ճարելու : Փարիզի մէջ գտնուած զինուորական և քաղաքական երևելի անձինքը, որոնք նախորդ կառավարութեան կուսակից էին, գրեթէ ամէնքն ալ փութացան իրենց հաճութիւնը և գործակցութիւնը մատուցանելու հասարակապետական առժամանակեայ կառավարութեանը, որ եղբայրական սիրով ընդունեց զանոնք :

Գաղղիոյ բոլոր նահանգներէն և գլխաւոր քաղաքներէն եկած լուրերը խիստ յաջող են, և կը ծանուցանեն թէ ժողովուրդը ամէն տեղ յօժարամտութեամբ ընդունելու են հասարակապետական նոր կառավարութիւնը, որուն ազատասէր և մարդասիրական ընթացքը յիշաւի գովութեան արժանի են . ըստ որում բաղմամբ ազգօգուտ հրովարտանքներ հրատարակեց, որոնց մէջ երևելի է մահուան պատժոյն ջնջուիլը՝ քաղաքականութեան վերաբերեալ յանցանոց համար : Երբ այսպիսի ապստամբութեան մը մէջ մարդկային կենաց միտք մը չհանկուտէ վրայ, հոգ տանիլը անմիտքի ապստամբութեան մը մէջ մարդկային ամենամեծ բարոյականութեանը, և իրօք կը բացատրէ Հասարակապետութեան գրօշին վրայ եղած հետեւեալ երեք սրբազան բառից միտքը՝ Գաղղիութիւն, Հասարակութիւն, Կրօնաբարեկարգութիւն :

Ինչպէս որ մեր նախընթաց թերթովը ծանուցինք, Մեզ զի տէրութիւնը արդէն իւր հաճութիւնը տուած է Գաղղիոյ Հասարակապետութեան հաստատութեանը, և անդ զիստ լրագիրները մեծ ուրախութեամբ և համակրական սիրով կը հրատարակեն Փարիզի այս երևելի գեղքը՝ ինքնակից ըլլալով գաղղիացի ժողովուրդեանը իւր դիւցազնական յաղթութեանը համար : Գովելլիցի մէջ մեծ և բերկրաւիթ ազգեցողութիւն մը ըլլաւ Գաղղիոյ Հասարակապետութեան հաստատուիլը, և ընդհանուր դաշնագրութեան ժողովը խիղճն 101 թիւնով արձակել տուաւ ՚ի նշան ուրախութեան Միլիթարի Միացեալ Նահանգաց դես

պան միութիւն (Եւրոպա, փետրւարի 16—28) ին առժամանակեայ կառավարութեան պալատը երթալով՝ իւր մտերիմ ինքնակցութիւնը յայտնեց համառօտ և ազգու առեւտրականութեամբ մը : Հոգ մայի սրբազան Վահանայապետին դեսպանն ալ նմանապէս փութացաւ յատուկ նամակաւ մը իւր ինքնակցութիւնը յայտնել արտաքին գործոց տեսչութեանը Տըլամարթինին : Եւ երբ կը համարիմք այս տեղաւորութիւնը միւս միայն նկարագրել թէ մըջակցութեան և ուրախութեան պատճառ եղան Միլիթարի մէջ Փարիզի ապստամբութեան լուրերը, և Հասարակապետութեան հաստատուիլը . բանով յիշեալ երկրին բաղմամբ ժողովուրդը, որ յառաջանէ միայն Մեզ զի տէրութեանէն օգնութիւն կը յուսար իւր ազգային իրաւանց և ազատութեանց պահպանութեանը և յառաջագիմութեանը համար, հիմա անտարակցայ Գաղղիոյ Հասարակապետութեանը վրայ ալ օրինաւոր անկեղծութիւններ կրնայ ունենալ : Եւրոպիոյ գործոց պաշտօնեայ մօտ Տըլամարթինը երկար յայտարարութիւն մը իրկեց օտար տէրութեանց քով գտնուող գաղղիացի դեսպանաց, որոնց կը ծանուցանէ Գաղղիոյ կառավարութեան խաղաղասէր և բարեկամական դիտաւորութիւնները Նիւսպայի ամէն տէրութեանց հետ : Եւ յատկապէս նիւսպային է որ կը սկստենք օգնութիւն Գաղղիոյ Հասարակապետութեան գլխաւոր սկզբունքներէն մէկն է :

Գաղղիոյ արքայական պալատը անկարող (էն վախտ) գործաւորաց ապստամբարան պիտի ըլլայ այսուհետեւ . և նախորդ թագաւորին ամսական թոշակը, որ մէկ միլիոն ֆրանք էր, ժողովուրդը վիճակը լաւայնելու համար պիտի գործածուի, առեւելքի համար մարդ մը բանտը պիտի չդուրս մինչեւ որ ազգային պատգամաւորաց ժողովը վիճակ մը տայ այս բանին վրայ : Պատգամաւորաց (տե՛ս փութ) թիւը 900 հոգի պիտի ըլլայ այսուհետեւ, Նիւսպայի երկրորդ մէկ տեղ հաւելելով 40,000 բընաւոր համար մէկ պատգամաւոր պիտի ընտրուի արդէն հրաման տրուեցաւ որ ապրիլի 9ին Նիւսպայի այս ընտրութիւնը Գաղղիոյ ամէն նահանգաց մէջ : Եւ նոր ազգային պատգամաւորները Փարիզի մէջ ժողովուրդը, նախ հասարակապետական կառավարութեան փայօք իրենց հաճութիւնը պիտի յայտնեն, և հետեւեալ ամէն կերպ ազգօգուտ բարեկարգութիւններ հաստատուելու հոգ պիտի տանին :

Գաղղիոյ Հասարակապետութեան գրօշակին

ընթացքը ինքը անձամբ չափելով, ձեւերը գծաւ գրելով և այլն, և վերջապէս անանկ յաջող կերպիւ մը կարգադրեց, որ այս երկրորդ ճանապարհը տեսնող եւրոպացի հմուտ ճարտարապետները զարմացան յիշեալ հանձնարարական աղային ուղիւնութեանը և բարեկարգութեանը վրայ : Բնութի իրաւամբ երանութեան արժանի են այսպիսի տաղանդաւոր շնորհալի զաւակները, որոնք իրենց բարեբաւոյն ծնողացը և հետեւեալ ընդհանուր ազգին փառք և սրբանք կը ըլլան : Նմանապէս երջանիկ համարելու է այն խոհեմ և հեռատես ծնողը, որոնք ժամանակաւ ամէն կերպ բարեկարգութեամբ և պէտքէն գիտութեամբ կը զարգացնեն իրենց սիրելի զաւակին : Եւ այս ինչպէս որ վերը ըսի ՚ի անհնար է որ մեր ազգին տաղանդաւոր երիտասարդաց բնական հանձնար ՚ի գործ դրուի և պայծառանայ՝ առանց մարդասիրական ձեռնտուութեան մեծագոյն օժանեան տէրութեան : Բնութի այս երկրորդ ճանապարհն ալ, որ Պոսթորի, այսինքն Կոստանդնուպոլսոյ ներքուցին վրայ Պէօլիք տէրէ ըսուած գեղին մօտ է, բարձրագատիւ (հմետ Պէթի) փառային արդեամբ և քաղաքութեամբ շինուեցաւ աղիւսի (թուղայի) համար հաստատեալ իւր գործարանին մէջ, որ սոսորտան օրս խիստ յաջողութեամբ կը յառաջագործէ : Եւ ընդարձակ գործարանը ծովին ե

ղերքէն սկսեալ մինչեւ միւս ծայրը գլեթէ երկու միլիոն չափ կայ, և մէջը չորս մեծամեծ փուռներ կան, որոնց մէջ շաբաթը 80,000էն աւելի աղիւս (թուղայ) կընայ եփուիլ, ուստի ամէն կերպ իւր նայողական միջոցները հարկ էր փորձել, որպէսզի այսպիսի հասարակաց շինութեան օգտակար հաստատած մը (բօսալի) ըստ հնարաւորութեանն աման գնով ելլէ, և ըստ ամենայն մասին ազգի ըլլայ . և ահա այս բարեկարգ շնորհաւոր ձեւը բերած է յիշեալ բարձրագատիւ փառքն երկրորդ ճանապարհին շինութեանը գործադիր ըլլալով : Բանով յառաջանէ հարկաւոր անձինք կաշնատէրէն բեռնակրութեամբ, այսինքն փայտը անուր, կաւը և աղիւսը փոխադրելու համար . որոնք մեծ աշխատութիւններ են, ըստ որում պէտք է որ ամառուանէ պատրաստուին բոլոր երկրու աղիւսները, և վրան գոյ մասնաւոր տեղերանք զետեղուին, որպէսզի բաւական պաշար գտնուի ձմեռուան համար, որ ժամանակ միայն փուռն մէջ կը դրուին երկրու համար : Բնութի մտածելու է թէ այս զանազան փոխադրութեանց համար մըջակցութեան մեծ ծախք կը ըլլար, և հիմա երկրորդ ճանապարհին միջոցաւ ինչպէս գիւրութեամբ և գրեթէ ոչինչ ծախքով յառաջ կը ընթացէր գործը, մէկ կողմ թողունք նաեւ այն օգուտը որ քիչ ժամանակի մէջ շատ բան կը տեսնուի : Եւ այս տե

տակ աղիւսին գործածութիւնը օր ըստ օրէ տեսնուելով մայրաքաղաքի մէջ, ՚ի հարկէ յիշեալ գործարանին աշխատութիւններն ալ պիտի շատնան, բայց և այնպէս այն ժամանակն ալ միայն երկու ձի փոխադրելու գործածուելով բաւական կը ըլլայ գործարանին բոլոր աշխատութեանցը, ըստ որում բեռ բարձր սայլերը այն ատիւնան կառարութեամբ շինուած են, որ երկրորդ ճանապարհով ըստ մը յարմարեցուցած, այնպէս որ առանց հոգ չըլլալով, տիպաւ չըլլար, իսկ ջուրերը երթալու համար, այս ճամբուն երկու կողմէն հաստատուած է ջրանցքներ շինուած են, ուր տեղ ամէն ջուրերը խիստ դիւրութեամբ կը թանկանան և անկեց ծովը կը թափուին : Եւ այս ջրանցքին վրայ տեղ տեղ պատշաճաւոր կամուրջներ շինուած են, որպէսզի մէկ կողմէն միւս կողմը անցնելու ճամբայ ըլլայ : Եւ այսպիսի երկրորդ ճանապարհին վրայ չորս մեծ սայլ կը բանին, որոնցմէ ամէն մէկը հազարական աղիւս (թուղայ) կը պարունակէ, և իւրաքանչիւր աղիւսը մէկ օխայ և երբեմն

գործերը՝ ետքի հրամանագրին համեմատ՝ հետեւեալ կարգ աւ պիտի ըլլան . այսինքն նախ՝ կապուտ (մալի) , մէջ աւելը ճերմակ , և ծայրը կարմիր : Բազմաթիւ անձինք իրենց պաշտօնէն զրկուելու օրոնց կարգը են նաեւ մօսիւ տը Պարբերէյ . որ դեպքան էր ՚ի Կոստանդնուպօլիս , մօսիւ Բօսնի որ նոյն պաշտօնը կրկարէր ՚ի Հոմ , մօսիւ Պիւս հօլը , որ դեպքան էր ՚ի Լէննա , մօսիւ տը Պրօյլին , որ անորայի մէջ դեպքան էր , մօսիւ տը Պուալը . քանի , որ Օուլիցցերի մէջ էր և այլն :

ԻՅԱԼԻԱ . Հոմ 27 փետրուարի : Սրբազան Պապը՝ ժամանակիս յառաջագիւմութեանը և օրինաւոր պահանջմանցը համեմատ խոհեմ ընթացք մը ունենալով , կը պատրաստուի նոր սահմանադրութիւն մը (քննութիւթիւսիօն) հաստատելու մօտ օրերս՝ ըստ թախանձական խնդրոյ ժողովրդեանն . որ անհամբեր է իւր քաղաքական կատարեալ ազատութիւնը ներք ընդունելու : Լրդէն պաշտօնէից (մինիսթր) նոր խորհրդարան մը կարգադրեցաւ . որուն ինք անդամներէն՝ վեցը աշխարհական են . այս դիպուածը նշանակութեան արժանի և խիստ երեւելի է հռոմէական տէրութեան յառաջագիւմութեանը համար . որուն կառավարութիւնը մինչև ցայսօր միայն եկեղեցականաց ձեռքն էր :

Կոր պաշտօնէից անուանքը հետեւեալներն են .
Կարգիւնալ Անթոնիէլլի՝ արտաքին գործոց պաշտօնէից և գահերէց :
Գործ Սիրիլիսի արքեպիսկոպոսը՝ եկամտից պաշտօնէից :
Կարգիւնալ Ճիւզէփիէ Մէծօֆանիլիս՝ հասարակաց դատարար , կութեան պաշտօնէից :
Պարս Կոյէթանօ Քէրքին՝ ներքին գործոց պաշտօնէից :
Պ . Գրանչէպօ Սթուրպիլիսիլի փաստաբանը՝ արդարութեան :
Պարս Սարքօ Սիլիսթիլիսի հրապարակական շինուածոց :
Լյուսպրանտինի իշխանը՝ պատերազմի պաշտօնէից :
Ճիւզէփիէ Բալլիլի կանոն՝ առեւտրի պաշտօնէից :
Ճիւզէփիէ Կալէթիլի փաստաբանը՝ ստիկանութեան (բօլցիս) :
ՆԱԲՈՒՆԻ ՏԵՐՈՒԹԻՒՆ : Փետրուարի 25ին մեծ խորհուրդ մը եղաւ պաշտօնէից մէջ . ուրտեղներ կայ էին Լորտ Մինթօն և քանի մը երեւելի սիկիլիացիներ : Եւ ժողովին մէջ սիկիլիացեաց ամէն խնդիրները ընդունուեցան , և 1812ին սահմանադրութիւնը վերստին հաստատուեցաւ այս կղզիին մէջ : Կարելի թագաւորը հաճութիւն տուաւ , որ անմիջապէս ազգային պատգամաւորաց ժողովը գումարուի ՚ի Բալէրմօ՝ յիշեալ սահմանադրութեան հարկաւոր եղած փոփոխութիւնները ընելու համար : Բաճճիէրօ իշխանը , որ Բալէրմօյի առժամանակեայ կառավարութեան գլխաւորն է , Սիկիլիա կղզւոյն Փոստաբայ անուանեցաւ : Եւ որոշումները ըմբռնաւորակէս՝ խիցն շողեւաւ մը խորհեցաւ ՚ի Սիկիլիա պատերազմը դադրեցնելու :

աւելի ալ կը լիւնէ . այսու ամենայնիւ մէկ ձի այն պէս զիւրութեամբ և արագութեամբ կը քաշէ զայլը , որ երբեմն հարկ կը լիւնայ անոր ընթացքը յամրացնել . և այս բանը սոյլին քովին գոյալ մարդը կրնայ ընել՝ անիւին (թէքէրէք) վրայ շփող գործիքը կանոնաւորելով :
Տատեան քաջատառ միկ Ներսէս Խորրով աղային ուրիշ մէկ ծարտարամիտ գործողութիւնն ալ գուր թեամբ յիշատակելու արժանի կը համարիմ : Յայտնի է որ Կոստանդնուպօլսոյ մէջ մինչև հիմա խորունկ հորէ մը ջուր վեր հանելու համար՝ հին պօսան քօչապը ըստած գործիքէն գատ , ուրիշ միջոց մը չկար . և այն ալ շատ պակասութիւններ և անկատարելութիւններ ունի , ուստի յիշեալ պայտալար այս արեւելաստական պակասութիւնն ալ լոյս անցած տարի՝ իւր անխնայ աշխատութեամբ և հնարագիտութեամբ , քանզի նոր տեսակ արտուական ջրհան մը (թուրուսիւ) շինեց . որ բիշ ժամու մէջ բաւական առատութեամբ և գիւրի կերպով ջուր կը հանէ խիստ խորունկ հորէ : Եւ յետագայով՝ Ներսէս Խորրով աղան այս տեսակ առաջին ջրհանը՝ օգոստոսիս Սուլթանին առաջին սենեկապետ վսեմափայլ Համիտ պէյին պարտէզին մէջ կարգադրեց . ուրտեղ հարկաւոր կանգունի չափ խորութեամբ հորէ մը ջուր վեր

լու համար , և հետեւեալ օրը անգղիացի ծովապետ Բէրքերին երեք նաւերն ալ ճամբայ ելան յիշեալ կղզին երթալու , հետեւին ունենալով ըստ Մինթօն և նաւորիցի զօրապետ Սթաթիլիսի :

ՍԱՐՏԵՆԻԱՅԻ ՏԵՐՈՒԹԻՒՆ , Հանգստութիւնը և բարեկարգութիւնը օր ըստ օրէ կը հաստատուին . բայց կառավարութիւնը արժան համարեցաւ յիսուսեան կրօնաւորաց դպրոցները գոցել տալ , ըստորում՝ ժողովուրդը առհասարակ խիստ գէշ համարում մը ունէր այս կրօնաւորաց վրայ և կը խաղաղէր որ մեծ անկարգութիւն մը չպատահի : Եւ զիսուսեան վրայօք Դուրինօյի մէջ ՚ի պաշտօնէ հրատարակեալ լրագիրը հետեւեալ կերպով կը գրէ .

« Երէկ յիսուսեան ընկերութեան հայրերը տէրութեան հրամանին համեմատ , սկսան իրենց տները պարպել և մեկնիլ այս քաղաքէս : Եւ որոշումը թէպէտեւ արդէն կը գուշակուէր , բայց և այնպէս մեծ ազդեցութիւն ըրաւ հասարակութեան վրայ : Ժողովրդական ցոյց մը այս հայրերուն դէմ՝ անխորշէն կերեւէր : Ինչպէս որ նոյն գիշերը իրօք տեղի ունեցաւ այս ցոյցը յիսուսեան ընկերութեան տներուն չորս կողմը . և խռովութիւնը ու աղմուկը մինչև կէս գիշեր գիւնացաւ : Վերջապէս տեղական կառավարութիւնը պարտաւորեցաւ միջամտիլ ըլլալու այս ցաւալի դիպուածին մէջ՝ բազմութիւնը ցրուելու համար , և բարեազդաբար առանց արիւնահեղութիւն մը պատահելու ամէն բան հանգարտեցաւ » :

ԼՈՍՊԱՐՏԵԱՆ—ԱԵՆԵՏԻԱ : Միլանէն հասած լուրերը կը ծանուցանեն թէ Լէստրիոյ կառավարութիւնը կերեւի թէ միտք ունի ազատական թողութեան թիւններ տալ Լոմբարտեան—Վենետիկի տէրութեան ժողովուրդը . որոնք ամէն առթիւ չեն դադարիլ իրենց այս եռանդուն խնդիրը յայտնելու կառավարութեանը : Եւսու ամէն նայնիւ մինչև այս նոր սահմանադրութեանց հաստատուիլը արիւնահեղ կռիւներ անպակաս են միշտ ժողովուրդի և պահապան զօրաց մէջ : Եւսու ետքիները փետրուարի 25ին Բատուայի և Բալիայի համալսարանաց անդէն ուսանողներուն վրա հրացաններ պարօրելով , շատ հագի սպաննեցին : և վիրաւորեցին : Բատուայի համալսարանին կառավարիչ արժանապարգ պարոն Բալէթիլիս այս խեղճութիւնները տեսնելով արժան համարեց իւր պաշտօնէն հրաժարուիլ : Իսկ հրացանները անդէն երիտասարդաց վրայ պարպել հրամայողներէն մէկն ալ Սալիս—Սոլիս զօրապետն է . որ ինչպէս յայտնի է , Օուլիցցերի նախորդ միտքանեալ թ

հանեց այնպիսի յաջողութեամբ մը , որ յիշեալ վսեմափայլ Վէլին մտերիմ գովութեանը արժանի եղաւ : Եւ հաջորդ Կայսրը այս ջրհանը տեսնելով շատ ուրախացաւ և իւր բարձր գոհունակութիւնը յայտնեց , հրաման ընելով որ Վէլիթալի արքունի պարտէզին մէջն ալ շինուի : Ուստի Խոսրով Ներսէս աղան , այս ջրհանէն ՚ի գատ , ջրացայտ աւազանի (ֆլուպիլ) գեղեցիկ գաղափար մը դժագրելով Կորին Վէլիսիաութեանը ներկայացաւ . որ նմանապէս հրաման ըրաւ՝ շինուելու նոյն գաղափարին համեմատ : Եւսու ջրացայտը Փարիզի Շանլէլէ ըստած պարտէզին մէջ եղածէն գեղեցիկ է , բայց քիչ մը անկեց պղտիկ . և բոլորն ալ ձուլեալ երկաթէ շինուեցաւ : Եւսու վարի կողմը սիւնաձեւ եռանկիւն է , և վրան երեք կողմէն մէյմէկ դիւրին կրտսնուի՝ պոչերին գէպ ՚ի վեր դարձած և բերանէն երկձիղ ջուր կը լցուի գէպ ՚ի յօդս . իսկ պոչերնուն վրայ մէկ գեղեցիկ աւազան մը կայ շինացի ձեւով , և անոր բոլորիքը հինգ կարապ (խուխու) կայնած են . այս թռչուններուն բերնէն ջուրը կամարաձեւ մէկմէկու վրայէն անցնելով վերստին յիշեալ աւազանին մէջ պիտի թափուի , և անոր բոլորիքէն ջրով շինուած նման բոլոր ջուրը մեծ աւազանին մէջ պիտի երթայ : Խիստ վերի ծայրը՝ թեւերը բայց մեծ

նահանգաց սպարապետ և գլխաւորն էր , և հիմակ Լէստրիոյ ծառայութեանը մէջ մտած է : Եւսու ցաւալի դիպուածը հարկ կը համարիմք նշանակելու , որպէսզի և թէ կարելի է , տակաւ թիւ լրագրաց ոմանց միտքը լուսաւորուի . որոնք մինչև ցայսօր յիշեալ հռոմէական շահանգաց կառավարիչներուն դիտաւորութիւնը կը ջատագոյնէն :

ԶՈՒԻՅՑԵՐԻ : Կաղիլոյ ապստամբութիւնը արդէն իւր աղղեցութիւնը ըրաւ Օուլիցցերի մէջ : Նիշաթէի նահանգը , որ Բրուսիոյ իշխանութեանը տակն էր , առանց արիւնահեղութեան զատուեցաւ յիշեալ տէրութեանէն , և յատուկ հասարակապետութիւն մը հաստատեց . որնոր անմիջապէս ճանցաւ Հելլուստիայի ընդհանուր դաշնագրութեան ժողովը : Լրդէն առժամանակեայ կառավարութիւն մը կարգադրեցաւ , որ փետրուարի 19 (մարտի 2) թուով յատուկ յայտարարութեամբ մը այս բարեբաղդ դիպուածը ծանուցանէ քաղաքացւոյ :

Հելլուստեան ընդհանուր դաշնաց հարկաւոր փոփոխութիւններ ընելու համար սահմանաւոր ազգային հագաբարձուքը , մեծ գործունէութեամբ յառաջ կը ըստանին այս օգտակար աշխատութիւնը . որ Օուլիցցերի հասարակապետական կառավարութեան զօրութիւնը պիտի աւելնէ՝ սղդին մէջ աւելի միութեան կապեր հաստատելով :

ՅՈՒՆԱՍՏԱՆ . Աթէն 8 մարտի : Քանի մը ժամա նակէ հետէ մեծ տրտուք կընէր ժողովուրդը պաշտօնէից (մինիսթր) ընթացքին գէմ : Հասարակութեան այս դժգոհութիւնը օր ըստ օրէ աւելնալով , թագաւորը պարտաւորեցաւ պաշտօնէից նոր ժողով մը կարգադրել հետեւեալ կերպով .

Պարոն Գոնտուրիսթին՝ ծովային զօրութեան պաշտօնէից և գահերէց ժողովցի , պարոն Քրէսթէնիթին՝ ներքին գործոց պաշտօնէից , պարոն Լ . Մալլոմիսթին՝ ուսմանց և կրօնից , պարոն Բոսիօսը՝ պատերազմի պաշտօնէից , պարոն Տրօսօ Մանսօրան՝ արտաքին գործոց պաշտօնէից , պարոն Խրիսթաքօսթիսթիս՝ եկամտից , և պարոն Տ . Քիլիօթօն՝ արդարութեան պաշտօնէից :

— Ուսաց օգոստոսիս Կայսրը երեւելի Ռուս ծարտարապետ մը խրկած է Լթէնք՝ հոյակապ եկեղեցի մը շինելու համար . որուն ծախքը մէկուկէս միլիոն ռուպլի պիտի հասնի , այսինքն զի միլիոն զուրուշ : Եւսու եկեղեցին բոլորովին մարմարի բարեբե պիտի ըլլայ , և իւր փառաւոր շինուածքով , մեծաշաք տեսքով , և հարստութեամբ նմանը պիտի չգտնուի Լթէնքի մէջ :

կարապ մըն ալ կայ . որուն բերնէն ելած ջուրը շատ բարձր դէպ ՚ի յօդս պիտի ցայտի : և այս ջուրը ժողովութեան համար արդէն բարձր տեղ մը մէկ շտեմարան (խաղէ) շինուեցաւ յիշեալ ծարտարամիտ Կայսին տնօրէնութեամբ : Չեմ ուզեր լուրութեամբ անցնելու այստեղս ապիտուալ քաղաքի Ներսէս Խորրով աղային ուրիշ մէկ երեւելի ծառայութիւնը յօդուտ օտմանեան տէրութեանը Կոստանդնուպօլսոյ մաքսատան մէջ ապրանքները կը ելու ժամանակ միշտ խորագիտութիւններ կը լցուն կը լուրդները հարկաւոր կատարելութիւնները չունենանալու համար : Ուստի յիշեալ ծառայութեան հասակ Կայսին փութացաւ ըստ խնդրոյ այժմեան մեծ մաքսապետ վսեմափայլ Վէլիսիոյ փաշային նոր տեսակ պատուական կը լուրդ (քանթար) մը շինելու , որ յար և նման է Լէրոպոյի մէջ գործածուած կը լուրդաց , մանաւանդ թէ ասիկա աւաւելի ուրիշ կատարելութիւններ և գիւրութիւններ ունի մաքսատանը վերաբերեալ պարագայից համար : Եւսու կը լուրդը՝ շատ ժամանակ չէ որ վերադառնաւ նոր կամուրջին քով , ուրտեղ նաւերէն ելած և ուրիշ տեղորանքէն եկած ապրանքները պիտի կը լուին : Յիշեալ նորաշէն կը լուրդը մէկ տիրէ մէկ սկսեալ մինչև 3500 օխայ ծանրութեամբ ապրանք կը լիւնէ խիստ ճշգուրտութեամբ և զարմանա

ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ Ի ԱԵՆԱ

ԱՒՍՏԻԱ. ԱՅՆԱ, 2-14 մարտի : Մեծ և անակնու-
նելի ապստամբութիւն մը ծագեցաւ երկի այս
մայրաքաղաքի մէջ. որուն բնակչաց վրայ սատարիկ
ներգործութիւն ըրած էին Փարիզի զիւցաղնական
գիւղաւանները : Հարիւր հազար հոգիէն աւելի
միաբանելով աղերսաւոր մատուցին ոգոտափառ
կայսեր, որուն կրօնականներն թէ ժողովուրդը
նոր բարեկարգութիւններ և սպազբոյ թեան ա-
զատութիւն կրնանդէ : Բայց այս խնդրոյն խնդը-
բան պատասխան մը տալանգամ արժան չհամա-
րեցաւ կառավարութիւնը : Աւստի ամայս 12ին
ըստ ֆրանկաց՝ ուսանող երիտասարդները պատա-
րազէն ետքը մէկտեղ գումարուեցան 3000 հո-
գիէն աւելի, և բարձրաձայն պոռաւով կրպահան-
քէին Վատ սպազբոյթիւն, Հրատարակութիւն
գատաստանական վիճարանութեանց, Վրդային
պահապան զօրաց հաստատութիւն, և այլն և այլն :
Վնոյս 1-13ին ապստամբական շարժումը անընդ-
դիմանալի եղաւ, և ժողովուրդը գէնը տանելով
միաբանեցան արուարձաններէն և շրջակայ գեղե-
րէն եկողներուն հետ. և ամէնքը մէկէն, (որոնց
թիւը 100 հազարի կը հասնէր), կառավարութեան
խորհրդարանին վրայ յարձակուելով, անոր ան-
դամները արտաքսեցին : Յայնժամ Վ Էննայի կա-
ռավարիչ Վրդերթ արշիդուքը հրաման տուաւ
պահապան զօրաց, որ կրակ ընեն ժողովուրդին
վրայ. որոնցմէ 150 հոգիէն աւելի մեռան, և շատ
անձինք ալ չարաչար վիրաւորուեցան : Բայց այս
արկնահեղութիւնը ևս առաւել բորբոքեց ժո-
ղովուրդին սրտմտութիւնը, և մեռնողներուն զի-
ակաները փողոցէ փողոց պարտոյնելով Վրդերթը
իւն կը պոռային սոսիակի ձայնիւ :

Վերջապէս կայսրը խոտոտցաւ ի գործ գնել
իւր ժողովուրդին պահանջները : Մեթերնիք
իշխանը արտասուքեցաւ հրաժարուիլ իւր պաշ-
տօնէն, և արդէն Վ Էննայէն ելելով գէպ իՄո-
րալիա գնաց : Մեթերնիք իշխանին գեղի տունը,
նմանապէս Շէնպուրունի կայսերական պալատը
կողպարեցին, և ուրիշ անկարգութիւններ պատա-
հեցան : Տպագրութեան ազատութիւն շնորհուե-
ցաւ անմիջապէս և ազգային պահապան զօրք կար-
գադրելու հրաման եղաւ : Վ Էննայի բազմաթիւ
ոստիկանութեան (բոլոցիս) պաշտօնը հիմնուե-
հիմա ուսանողները և քաղաքացիները կընեն, ո-
րոնց բաւական գէնը տրուեցաւ :

Ժողովուրդին եղած այս շնորհները տօնախմբ-
բերու համար մարտի 1-13ին գիշերը Վ Էննայի
բոլոր տունները լուսաւորուած էին, իսկ կայսրը

ըն սրագէտութեամբ մը, այլևս մէկ գրագիր միայն
բաւական է, որ կշիւր նայելով, որչափ ըլլալը
նշանակէ. և այս կերպիւ յայտնի է որ կերպ կերպ
խորդախութիւններ չկրնար ըլլալ, ինչու որ մէկ
հաւատարիմ գրագիր գտնելը դիւրին է : Իսկ յա-
ռաջմանէ, ինչպէս որ յայտնի է, բազմութիւն
պաշտօնականներ և գրագիրներ հարկաւոր էին
այս գործին համար :

Վերջ կընեմ նամակս՝ ազգասիրական մտերիմ
բարեմաղթութիւններ ընելով առ Վրտուած, որ
պէտքը ազգերնու մէջ այսպիսի բազմաշխատ և
քաջուշիմ ազնուական երիտասարդաց թիւը ա-
ւելնայ որ ըստ օրէ՝ յօգուտ օտմանեան մեծագոր-
տէրութեանը և ի պատիւ լուծեան ազգիս :
Ողջունելով զյարգութիւն ձեր անկեղծ սիրով
մնամ. ազգօգուտ լրագրիդ յառաջագիտութեա-
նը և ձեր առողջութեանը բարեմաղթու :

Ո՞ն յապրագրողաց յերոց :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՃ

Վ Էննայի վրանք մը չկայ մեզ համար այնպիսի գոր-
ծի մը մէջ, որպէս թէ իրաւունք և մեր պարգաւ-
րութիւնը ի պաշտպանէն զմեզ :

արշիդքին պալատը և Օգոստինեան կրօնաւորաց
վանքը բռնութեամբ լուսաւորելուին : Թէ-
պէտե առայժմ հանդիսութեան մէջ է մայրաքա-
ղաքս, այսու ամենայնիւ ամէն խանութները,
գրատունները և պրեսն գոց են :

Լուտովիկոս արշիդքը, և Վրդերթ արշի-
դուքը իրենց պաշտօնէն հրաժարեցան : Հոյս
կունը ազգային պահապան զօրաց հրամանատար
անուանեցաւ : Կըհաստատեն թէ կայսեր եղբայր
Պաանդիկոս կարոլոս արշիդուքը, և իւր ըն-
կերը Սոֆիա արշիդքուհին, նմանապէս Վրդ-
րաթ իշխանը՝ ժողովուրդին օրինաւոր պահանջմանցը
ջատագով և պաշտպան են :

ՔԱՆԱՅԱԿԱՆՔԻ

Չիւսնիս, 19 մարտի :

Վ Էննայի սրբազնատէրք ազգասէր ՆԵՐՍԵՍ
կաթուղիկոս և ծայրագոյն Քահանայապետը ա-
մենայն Հայոց, (որուն հայրենասիրական շնաչ-
խարհիկ վեճմ գագմունքը քաջայայտ են ամէ-
նուն) բարեհաճեցաւ մարդասիրաբար 3000 դու-
րուշ նուիրել Սիւնեաց Սիւնեութեանը՝ ի բա-
ջալերութիւն ազգօգուտ միաբանութեանս : Վրդ-
յապացոյց իւր քահանայապետական բարձր գո-
հունակութեան կամեցաւ ազգասիրաբար սրա-
ուել Վրդերթի Վրդերթի գրամական յատուկ
պարգևով : Վրդ՝ այսպիսի վեհանձնական վար-
ձատրութեան արժանիքը քաջ ճանաչելով, կրկու-
թամբ գեղեցիկ պարծանք մը հրատարակելու այս
մեծ պատիւը, և միանգամայն մեր սրտին խորին
և քերականգ երախտագիտութեան հաւատաբար :

— Ենցած շաբթու հինգշաբթի օրը Վրդերթին
գալու ջորեպանը ճանապարհին գողերու հանդի-
պեր է Չափը պէլ ըստած տեղը, որոնք ջորեպա-
նին և հետը եղած ճամբարդներուն վրայ յար-
ձակուելով 2 հոգի մեռցուցին են, և 3-4 հոգի
վիրաւոր են՝ ճամբարդներուն վրայ գտնուած
20-30 հազար դուրուշ աւելելով : Իսկ ջորեպանը
աւաւտեր է զինքը, և քովը եղած գրամները :

Յորդոյ հրատարակիչ Վրդերթ :

Կոստանդնուպոլիս, 16 մարտի 1848 :

Հատ շնորհ ունիմ ձեզ, որ Սամաթիոյ սուրբ
Սահակեան վարժարանին վրայօք գրած նամակս
հաճեցայք ազգասիրաբար հրատարակելու ձեր
պատուական լրագրին 306 երորդ թուոյն մէջ :
Բայց կը ցուցիմ որ 37-90 թիւ Հայաստանի պա-
տասխանը ստիպեց զիս կրկին ձանձրութիւն տա-
լու ձեր յարգութեանը առաջիկայ նամակաւս :
Դուն կը յուսամ, նովին ազգասիրական եռանդ-
եամբ ինչպէս առաջին անգամը, քիչ մը տեղ սի-
տի ընծայեք այս շաբթուան հրատարակելի թիւը
թիւ մէջ, իմ կողմէս յառաջագոյն խոտոտնալով,
որ այս նիւթին վրայօք վերջի նամակս պիտի ըլլայ :

Հայաստանի յարգի հրատարակիչները կրնեն, որ
սուրբ Սահակեան գաղղոյն քննութիւնը ճանաչար
ըլլալուն համար չյիշեցին լրագրիւնուն մէջ՝ ոպա-
սելով ընդհանուրին, որուն չըլլալը՝ չէին գիտեր
նէ ալ, կրնային իբր հրատարակիչք լրագրի մը,
հարցութիւն ընելով իմանալ : Բայց մանաւոր
քննութիւնը հրատարակման աւելի արժանաւոր
չէ մի բան զընդհանուրը, որուն հանդիսին սով-
րաբար մեծագոյն բազմութիւն ներկայ կը գտնուին,
և միթէ ազգային յառաջագիտութեանց էն պղ-
տիկ լուրը մեծ միւթթարութեան և ուրախութեան
պատճառ չէ մի հայրենասէր սիրտերու :

Յիշեալ գաղղոյն թէթեւ գովաբանութեանս
համար, Հայաստանի հրատարակիչները զիս անոր
յնաչափ բարեկամ կանուանեն. բայց ոչ թէ յնաչ-
եալ, հապա ի սրտէ բարեկամ եմ. և ո՞ր ազգատ-
եաց չեղող հայազգին կրնայ թշնամի ըլլալ յառա-
ջագէմ և (մանաւանդ քիչ ծախիւք) բարեկար-
գեալ ուսումնասիրաներու : Բայց ես ոչ միայն ի
բարեկամութիւն սուրբ Սահակեան գաղղոյն յի-
շեցի անոր յառաջագէմ աշակերտաց քննութիւ-
նը, հապա իմ համագործ եղբայրս հազարդերու հա-
մար նոյն բերկրապատար ցնծութիւնը, զոր ես

ինքն զգացի : Սուրբ Սահակեան գաղղոյն աշա-
կերտաց Ռաբաթան անուն բանասիրական ամա-
կան տեղորակին մօտերս հրատարակուելու ծա-
նուցումը պատուելի Հայաստան իմ կողմէս իբր
ծառայութիւն մը եղած կըսեպէ կոր սուրբ Սա-
հակեան Սիւնեութեանը. բայց ճշմարիտ հայ
սիրտերը կը վրայեն, թէ այն ծառայութիւնը ոչ
թէ մանաւորաբար մէկ ընկերութեան է, հայա-
բոլոր ազգին : Օտմանալին և ցուալին այն է որ
Հայաստանի յարգի հրատարակիչները, ինչպէս որ
իրենք ալ կրկնատուանին, երբեք ահա առաջ հայա-
գեաց համար տասնի երեւելի ըլլալ մը տեղեակ ըլ-
լալով՝ չեն բարեհաճեր հրատարակաւ հազարդե-
լու ազգային յառաջագիտութեանց ցանկացող
հայերուն, (ուր թարուք որ պարտաւորութիւն
կայ իրենց վրայ այսպիսի ազգօգուտ առաջարկու-
թեանց գործադրութեանը քաջալեր ըլլալ. և ոչ
թէ յապաղմանը կամ արդէլմանը պատճառ) : Կէ-
րի թէ յիշեալ գաղղոյն ազգասէր աշակերտաց
այս բարի գիտաւորութեան անկատար մնալը մար-
գարեացեր են կամ փափագեր են, և այն պատ-
ճառաւ չեն հրատարակեր, ապա թէ ոչ, երբե-
ք ահա առաջ միայն չը խօսք անցնելով, նոյն միջոցին իբր
յայն ալ Գաղղոյն չէին ըսեր : . . . : Են հասարակ
նակ զրուցուած մը, որ Հայաստանի յարգի հրա-
տարակիչներուն ազգասիրութեանը պատիւ չնէր
բայց կուգէի հասկնալ թէ չը խօսք ըսելով ինչ
կիմանան, և հետեւաբար ինչ խօսք ոյն է, որ պա-
տուելի Հայաստանի ըսածէն կրմակաբար թէ
մարդ այս ձայնը պիտի չգաղղեցնէ :

Իմ լսածիս հաւատալու ըլլալ նէ Ռաբաթանի
հրատարակման որոշումը եղածի պէս է, և սուրբ
Սահակեան Սիւնեութեան կողմանէ հրաման
ինկրուեր է ազգային ժողովէն ըստ սովորութեան
բայց ցուալին է որ մինչև ցայսօր դեռ պատա-
խան մը չէ ելեր : Սակայն հաւատով եմ որ այսօր
հրամանը ստանալու ըլլան, քանի մը օրէն ետքը
Ռաբաթանի առաջին թուոյն հրատարակումը տե-
նելու կարժանանամք. որովհետեւ կըհաստատեն
թէ սուրբ Սահակեան գաղղոյն ժրջան աշա-
կերտները արդէն պատրաստած են քանի մը ամ-
սոց տեղորակները : Ես այսպէս ըլլալով, և Հայա-
ստանի յարգի հրատարակչաց մէկն ալ, (եթէ չեմ
փաշար)՝ ազգային հոգեւոր ժողովոյն անդամ ըլ-
լալով, չեմ գիտեր թէ ինչ կրուաւք զիւր անձը
պիտի արդարացնէ անկողնասէր և բարեխիտ
հասարակութեանը տուջը, չը խօսք միայն անցնելով
յայն ալ Գաղղոյն ըսելուն համար պաղ սրտիւ մը :

Ես վերջի նամակս հրատարակելու աշխատա-
նայց, և իմ զայն գրելուս փոխաբերելով ըլլալ ըս-
տացած կըլլամք և թէ Վրտուած յորման թեամբ
իւր նպատակին կը հասնի : Ենգաւոր հայ ո՞ն :

— Կոստանդնուպոլիսէն կը ծանուցանեն :
“Մարտի 7ին կիրակի օրը Խաղաղիկի Վերսի-
եան Հայոց ուսումնասիրանին աշակերտաց ընդհա-
նուր քննութիւնը եղաւ ի ներկայութեան բաղ-
մաթիւ հանգիսականաց, որոնք խիստ ուրախ ե-
ղան յիշեալ գաղղոյն բարեկարգ յառաջագիտու-
թեանը վրայ :

“Հռոմէական հայ ժողովուրդը ժամանակէ մը
ի վեր կը ցանկայ մայրաքաղաքիս մէջ ազգային յա-
տուկ ժողով մը հաստատել. որ կարող ըլլայ ինքը
կառավարելու աշխարհային գործերը, որոնք մին-
չև ցայսօր գրեթէ ըստ մեծի մասին հոգեւորական
նոց ձեռքը մնացած են : Ես կարեւոր ինդրոյն
գործադրութեանը համար՝ փետրվարի 29ին մեծ
խորհուրդ մը եղաւ մեջերին, բայց դեռ փաթ-
ձան մը չտրուեցաւ : Կըհաստատեն թէ գերապա-
տիւ Հաստանեան սրբապետ Պատրիարքը հռոմէ-
ական հայոց հաճութիւն տուած չէ այս օրինա-
ւոր առաջարկութեանը :

“Կըստուգեն թէ զօրապետ Պատրիարքն մօտ
օրերս պիտի գայ ի Կոստանդնուպոլիս՝ Պողոթի
Հասարակապետութեան գեապանի պաշտօնը վա-
րելու, փոխանակ մօտիւ Պուրբընէյին : ”

Հրատարակիչ և տէր լրագրիս :
Վրդերթ Վ. Պաշտպան :